**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ՈՐՈՇՈՒՄ

08 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 121-Ա

**ք. Երևան**

**«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի օգոստոսի 08-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 22 վարչական վարույթի նյութերը՝***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ իրականացրած մշտադիտարկման և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների ստուգման արդյունքում արձանագրել է լսողական մեդիածառայություն մատուցող **«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ** ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման կարգի խախտման փաստեր:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի օգոստոսի 08-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի օգոստոսի 08-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ կազմված արձանագրության՝ իրականացնելով Հեռարձակողի կողմից հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի 2022 թվականի հուլիսի 26-ի և 27-ի եթերի ձայնագրությունների մշտադիտարկում և համադրելով Հեռարձակողի կողմից 2022 թվականի օգոստոսի 5–ին տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրված և էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր ներբեռնված տվյալները, արդյունքում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները՝

2022 թվականի հուլիսի 26–ի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում՝ տեսալսողական հաղորդման անվանում սյունակում.

ժամը՝ 00:02:00-06:00:00 (տևողությունը՝ 05:58:00), նշված է՝ տեխնիկական անջատում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| Տեսալսողական հաղորդման անվանումը | Տևողություն |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:03 |
| Диалоги с Генри Сардаряном (Դիալոգի ս Գենրի Սարդարյանոմ) | 00:55:16 |
| Новости (Նովոստի) | 00:03:53 |
| Беседы с экономистом Михаилом Хазиным (Բեսեդի ս էկոնոմիստոմ Միխայիլոմ Խազինիմ) | 00:50:05 |
| На грани (Նա գռանի) | 00:03:31 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:00:58 |
| Новости (Նովոստի) | 00:03:52 |
| Прямой эфир (Игорь Ковалёв) (Պրյամոյ էֆիռ (Իգոր Կովալյով)) | 00:50:30 |
| На грани (Նա գռանի) | 00:05:17 |
| Новости (Նովոստի) | 00:03:47 |
| Клименко советует (Կլիմենկո սովետուետ) | 00:51:29 |
| На грани (Նա գռանի) | 00:03:25 |
| Новости (Նովոստի) | 00:03:50 |
| Большим о маленьких (Բոլշիմ օ մալենկիխ) | 00:51:40 |
| На грани (Նա գռանի) | 00:03:34 |
| Новости (Նովոստի) | 00:03:45 |
| Беседы с экономистом Михаилом Хазиным (Բեսեդի ս էկոնոմիստոմ Միխայիլոմ Խազինիմ) | 00:50:08 |
| На грани (Նա գռանի) | 00:03:34 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:01:07 |

Ժամը՝ 08:00:00-09:00:00 (տևողությունը՝ 01:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| Տեսալսողական հաղորդման անվանումը | Տևողություն |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:55 |
| Клименко советует (Կլիմենկո սովետուետ) | 00:25:18 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Клименко советует (Կլիմենկո սովետուետ) | 00:24:55 |

Ժամը՝ 10:00:00-12:00:00 (տևողությունը՝ 02:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| Տեսալսողական հաղորդման անվանումը | Տևողություն |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:45 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:25:44 |
| Новости (Նովոստի) | 00:03:00 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:26:37 |
| Новости (Նովոստի) | 00:04:00 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:25:41 |
| Новости (Նովոստի) | 00:02:56 |

| | |
|---|---|
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:26:13 |

Ժամը՝ 15:00:00-17:00:00 (տևողությունը՝ 02:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:46 |
| Большим о маленьких (Բոլշիմ օ մալենկիխ) | 00:25:01 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Большим о маленьких (Բոլշիմ օ մալենկիխ) | 00:26:02 |
| Новости (Նովոստի) | 00:03:45 |
| Прямой эфир (Պրյամոյ էֆիռ) | 00:25:42 |
| Новости (Նովոստի) | 00:03:00 |
| Прямой эфир (Պրյամոյ էֆիռ) | 00:26:39 |

Ժամը՝ 20:00:00-23:00:00 (տևողությունը՝ 03:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:59 |
| Допрос Вассермана (Դոպրոս Վասսերմանա) | 00:25:30 |
| Новости (Նովոստի) | 00:03:00 |
| Допрос Вассермана (Դոպրոս Վասսերմանա) | 00:26:24 |
| Новости (Նովոստի) | 00:03:45 |
| Починяем примус с Евгением Примаковым (Պոչինյայեմ պրիմուս ս Եվգենիեմ Պրիմակովիմ) | 00:25:45 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Починяем примус с Евгением Примаковым (Պոչինյայեմ պրիմուս ս Եվգենիեմ Պրիմակովիմ) | 00:26:38 |
| Новости (Նովոստի) | 00:03:55 |
| Кардиограмма дня (Կարդիոգրամմա դնյա) | 00:25:36 |
| Новости (Նովոստի) | 00:03:00 |
| Кардиограмма дня (Կարդիոգրամմա դնյա) | 00:26:41 |

2022 թվականի հուլիսի 27–ի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում՝ տեսալսողական հաղորդման անվանում սյունակում.

Ժամը՝ 00:02:00-06:00:00 (տևողությունը՝ 05:58:00), նշված է՝ տեխնիկական անջատում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:03 |
| Профессор смотрит в мир (Պրոֆեսսոր սմոտրիտ վ միռ) | 00:24:30 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:01:10 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |

| | |
|---|---|
| Профессор смотрит в мир (Պրոֆեսսոր սմոտրիտ վ միռ) | 00:25:12 |
| Новости (Նովոստի) | 00:03:50 |
| Холмогорская резьба (Խոլմոգոռսկայա ռեզբա) | 00:49:46 |
| На грани (Նա գռանի) | 00:03:48 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:00:52 |
| Новости (Նովոստի) | 00:03:45 |
| Допрос Вассермана (Դոպրոս Վասսերմանա) | 00:50:45 |
| На грани (Նա գռանի) | 00:03:34 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:00:47 |
| Новости (Նովոստի) | 00:03:59 |
| Починяем примус с Евгением Примаковым (Պոչինյայեմ պրիմուս ս Եվգենիեմ Պրիմակովիմ) | 00:52:05 |
| Узнать за 90 секунд (Ուզնած զա 90 սեկունդ) | 00:02:44 |
| Новости (Նովոստի) | 00:04:01 |
| Прямой эфир (Պրյամոյ էֆիռ) | 00:50:50 |
| На грани (Նա գռանի) | 00:03:48 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:00:55 |
| Новости (Նովոստի) | 00:04:17 |
| Профессор смотрит в мир (Պրոֆեսսոր սմոտրիտ վ միռ) | 00:55:38 |
| На грани (Նա գռանի) | 00:03:46 |
| День в истории (Դեն վ իստորիի) | 00:01:02 |

ժամը՝ 08:00:00-09:00:00 (տևողությունը՝ 01:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:58 |
| Починяем примус с Евгением Примаковым (Պոչինյայեմ պրիմուս ս Եվգենիեմ Պրիմակովիմ) | 00:26:52 |
| Новости (Նովոստի) | 00:02:45 |
| Починяем примус с Евгением Примаковым (Պոչինյայեմ պրիմուս ս Եվգենիեմ Պրիմակովիմ) | 00:26:40 |

ժամը՝ 10:00:00-12:00:00 (տևողությունը՝ 02:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:49 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:25:43 |
| Новости (Նովոստի) | 00:02:58 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:25:52 |
| Новости (Նովոստի) | 00:03:43 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:25:37 |

| | |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Изолента live (Իզոլենտա լայֆ) | 00:25:40 |

Ժամը՝ 15:00:00-17:00:00 (տևողությունը՝ 02:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:03:40 |
| Правозащитники (Պռավոզաշիտնիկի) | 00:25:45 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Правозащитники (Պռավոզաշիտնիկի) | 00:26:28 |
| Новости (Նովոստի) | 00:03:44 |
| Прямой эфир (Պրյամոյ էֆիռ) | 00:25:33 |
| Новости (Նովոստի) | 00:02:57 |
| Прямой эфир (Պրյամոյ էֆիռ) | 00:26:37 |

Ժամը՝ 20:00:00-23:00:00 (տևողությունը՝ 03:00:00) նշված է վերահեռարձակում, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հաղորդումները՝

| **Տեսալսողական հաղորդման անվանումը** | **Տևողություն** |
|---|---|
| Новости (Նովոստի) | 00:04:00 |
| Разбор полетов. Программа Николая Валуева (Ռազբոռ պոլյոտով: Պռոգռամմա Նիկոլայա Վալուեվա) | 00:25:35 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Разбор полетов. Программа Николая Валуева (Ռազբոռ պոլյոտով: Պռոգռամմա Նիկոլայա Վալուեվա) | 00:26:36 |
| Новости (Նովոստի) | 00:04:02 |
| Перископ: взгляд из глубины (Պերիսկոպ. վզգլյադ իզ գլուբինի) | 00:25:29 |
| Новости (Նովոստի) | 00:03:25 |
| Перископ: взгляд из глубины (Պերիսկոպ. վզգլյադ իզ գլուբինի) | 00:26:30 |
| Новости (Նովոստի) | 00:04:00 |
| Кардиограмма дня (Կարդիոգրամմա դնյա) | 00:25:41 |
| Новости (Նովոստի) | 00:02:55 |
| Кардиограмма дня (Կարդիոգրամմա դնյա) | 00:26:31 |

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի օգոստոսի 09-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը որևէ պարզաբանում կամ բացատրություն չի ներկայացրել:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, իսկ 2-րդ մասով սահմանված է, որ տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 154-Ա որոշման (այսուհետ՝ Կարգ) հավելվածի 10-րդ կետով սահմանվել է, որ պատասխանատու անձի կողմից տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կողմից հեռարձակված յուրաքանչյուր տեսալսողական հաղորդում մուտքագրվում է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և ներբեռնվում է էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր ՝ ոչ ուշ քան հաշվետու ամիսը լրանալուց հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրում են հետևյալ տեղեկությունները՝

1) տեսալսողական հաղորդման հեռարձակման օրը, ամիսը, տարեթիվը,
2) տեսալսողական հաղորդման սկիզբը և ավարտը,
3) տեսալսողական հաղորդման անվանումը,
4) տեսալսողական հաղորդման թեմատիկ ուղղվածությունը,
5) հեռարձակման տեսակները (հայրենական, սեփական, օտարերկրյա, վերահեռարձակում, տեխնիկական անջատում, պրոֆիլակտիկա, ընդմիջում),
6) տեսալսողական հաղորդման հեռարձակման լեզուն,
7) այլ տվյալներ:

Միաժամանակ, Կարգի 7-րդ կետը սահմանում է, որ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում վերոնշյալ՝ 6-րդ կետի 1-ից մինչև 6 ենթակետերում նշված տեղեկությունների գրանցումը պարտադիր է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար:

Օրենքի 3-րդ հոդվածում սահմանված են Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների սահմանումները, մասնավորապես.

**վերահաղորդում՝** այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության

հեռարձակումից մինչև դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետևանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված) տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողը չի ապահովել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով և Կարգով տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված՝ վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, մասնավորապես՝ հեռարձակված յուրաքանչյուր տեսալսողական հաղորդում մուտքագրել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան՝ պահպանելով Կարգի 6-րդ մասով սահմանված մուտքագրվող բոլոր տեղեկությունները, որոնց գրանցումը համաձայն Կարգի 7-րդ մասի բոլոր հեռարձակողների համար պարտադիր է: Հեռարձակողի կողմից 2022 թվականի հուլիս ամսվա 26-ի և 27-ի եթեր հեռարձակված տեսալսողական հաղորդումների տվյալները ճիշտ չեն ներբեռնվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, դրանով իսկ խախտելով Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշման պահանջը:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը հանդիսանում է լսողական մեդիածառայություն մատուցող, որը հեռարձակում է լսողական հաղորդումներ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքով արգելված արարքի կատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ սահմանված դրույթների պահանջները:

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. **«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ** ընկերության նկատմամբ կիրառել տույժ՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն **«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ** ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Վ. ՕՀԱՆՅԱՆ**

08 սեպտեմբերի 2022թ.
ք. Երևան